

ՔԱՐԱԶԽՈՍԱԿԱՆ

Տ. ՊՄԱԿ ԱԲԵՂԱ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐԱԶԸ՝

ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(13 հոկտեմբերի 2002 թ.)

*«Մարմին Զո անապական լիցի ինձ ի կեանս,
և սուրբ արին Զո ի քառաթիւն և ի թողութիւն մեղաց»:
(Պատարագամատուոյց)*

«Յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Ս. Պատարագի երկնառաք այս աղոթքը որպէս անուշահոյ խունկ և հոգևոր բուրմունք ենք առաքում Ամենագոր Փրկչին՝ հայցելով Տիրոջից Իր խաղաղությամբ, «որ ի վեր է քան զամենայն միտք և զբանս», ամրացնելու մեզ մեր կարգի ու կոչման մեջ և աներկյուղ ու անհաղորդ պահելու չարի ամեն որոգայթներից ու փորձություններից:

Գոհություն և փառք Ամենափրկիչ Միածնին, «որ արժանի արարեր զանարժանս հաղորդիլ սուրբ մարմնոյ և արեան Իրոյ», քանզի ոչ ոք, մարմնավոր ախտերով ու ցանկություններով բեռնավորված, արժան իսկ չէ համարձակապէս մոտենալու սուրբ, մեծ ու անավոր, երկնային ու անմահ Իր խորհրդին, այլ միայն Սուրբ Երրորդության անչափ բարերարության ու անբավ մարդասիրության շնորհիվ ավանդվեց մեզ քահանայության ու անարյուն զենման սպասավորությունը:

Տակավին քառասուրջա հոգեկործանության մի շրջան է բաժանում մեզ ձեռնադրման և օծման այն սուրբ պահից, երբ Միածնաէջ Սուրբ Տաճարում կամոքն Աստուծո, Հայոց առաքելաշնորհ Հայրապետի օրհնությամբ ու ձեռամբ Արմավիրի թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Սիոն եպս. Աղամյանի, այս Սուրբ Խորանի առաջ ծնրադրեցինք և ուխտադրեցինք՝ կոչվելով կուսակրոն քահանայության, լծակից ու աղոթակից դառնալով Սուրբ Ուխտի միաբանությանը:

«Յնծասցէ անձն իմ ի Տէր», քանզի փրկության հանդերձներով և ուրախության պարմունքներով իբրև փեսայի պսակեց մեզ՝ մատուցելու անդրանիկ Պատարագը Լուսավորչյան աստվածաէջ Սուրբ Աթոռում:

«Փառք Զեզ, Տէր, փառք Զեզ, յաղագս ամենայնի, փառք Զեզ»:

Աղոթք և գոհաբանություն Ամենաբարձրյալին, որդիական խոնարհագոյն և հոգեբուխ երախտագիտություն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետին, Որի հայրական հոգաբար խնամածության ներքո կրթվել ու հասակ ենք առել, խորին շնորհակալություն իմ հոգևոր ծնող խորհրդակալարար Սրբազան Հորը՝ Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Աղամյանին, ձեռամբ որի հոգևորական դառնալու մեր իղձն ի կարար ամովեց:

Անշուշտ, անդրանիկ այս Ս. Պատարագի ընթացքին մեր աղոթքներում չպիտի մոռանալք գոհունակությամբ և արժանիորեն հիշարարել նաև Վազգենյան ու Գևորգյան հոգեվոր կրթարանների տեսչություններին, դասախոսական կազմին, միաբանակից ու ճեմարա-

նակից եղբայրներին, ծնողաց և ողջ հավաքագյալ ժողովրդին, որոնցից յուրաքանչյուրն իմ որպես մարդու, որպես անհատի և կարևորագույնը՝ որպես հոգևորականի ձևավորման ու հասունացման մեջ իր բաժին լուծման ունի ներդրած, նման այն այրի կնոջ երկու լումային, որ Աստծո հանդեպ անմնացորդ սիրուց և արդար վաստակից է մատուցվում ըստ տվողի կարողության չափի, անտրտմունք, առանց հապաղման ու ծածուկ:

Այսօրվա ավելարարանական ընթերցվածն է այրի կնոջ երկու լումայի մասին այս պատմությունը, որը Քրիստոսի անմիջական ներկայությամբ է տեղի ունեցել: Սակայն այս հատվածի մեկնությանը չէ, որ այժմ պիտի անդրադառնանք, քանզի բազմիցս խոսվել է նրա պարունակած խորհրդի և իմաստի մասին, այլ կցանկանայինք շեշտել Աստծո հանդեպ հոգևոր նվիրարվության, զոհաբերության գաղափարի կարևորությունը մեր իսկ կյանքում, ներկա օրերին, որ լի է խառնաշփոթություններով, երբ կենցաղավարում է մի սերունդ, որն Ավելարարանի ոգուց, բառ ու բանից շար հեռու է:

Մի ժամանակաշրջան, երբ մարդկության մեծագույն մասն ապրում է առանց Աստծո, երբ մեծարվում և փառաբանվում են մարդը և գիտությունը, տեխնիկան և համակարգչային առաջընթացը և ժխտվում ու օտարվում է Աստծո գոյությունն առհասարակ և տեղ չի մնում հավատքի և աղոթքի, միևնույն ժամանակ իրականում Աստծո հանդեպ հավատքը կենդանի է, շարժուն և գործուն, այն կերպարանափոխում և դեպ ճշմարիտ զարգացում է ուղղորդում մարդկային միտքն ու հասարակական հարաբերությունները և առաջընթացը:

Կարծեցյալ զարգացումից սերված պարապուրդը, դավարկությունը մեր ժամանակի մեծագույն հակառակորդն է, որը հոգևոր տեղորի է ենթարկում մեր կենցաղը, միտքն ու հոգին, նույնիսկ՝ մարմինը, կազմալուծելով մեր հոգևոր կազմվածքը, ավանդական դիմագիծն ու կերպվածքը:

Իրապես, մեծ խորհուրդ ունեն «Մարդ է որ գործէ զերկիր» խոսքերը: Առանց գիտակցված ու նվիրված, զոհաբերված աշխատանքի չկա՝ հոգեկան խաղաղություն և կայուն վարքագիծ, չկա՝ առողջ պտղաբերություն, կասկածի տակ է առնվում հարապրության ու շարունակականության՝ սերունդներին հուսալի և հաստատուն արժեքներ ու կայացած ապագա փոխանցելու իրողությունը:

Արդ, հոգևորականի հավատի և գործի, նվիրումի բարձրագույն և սրբագույն միախառն արդյունքը նախ և առաջ Սուրբ և կենարար Պատարագի մատուցումն է, Տիրոջ Սուրբ մարմնին ու արյանը հաղորդակցվելն ու հաղորդություն փոխանցելը, բաշխելը: Այս խորհրդի կատարման ընթացքում անցնում ենք խաչի և հարության, հաղորդության և փրկության մի պարզ և անձկալի ուղի, և խորհրդի մի քանի տասնյակ թույլներով կարող է բնութագրվել ամեն մի քրիստոնյայի կենսակերպի ամբողջական համապատկերը:

Միտքներ, օրինակ եղեք, ինչպես Տիմոթեոսին ուղղված թղթում է ասվում, ձեր խոսքով, պահվածքով, սիրով և հավատով (տե՛ս Ա Տիմ. Ա 12), սովեք հավատի խոսքերով և բարի վարդապետությամբ, արդար և ազնիվ եղեք ձեր գործերի և վարմունքի մեջ, աղոթեցեք իմ մեղավորիս համար, որպեսզի Տերը զորավիգ լինի և ընդունելի անի այս Պատարագը Իր իսկ անվան և փառքի համար:

Նայեցեք Սուրբ Աստվածածնի և բոլոր սրբերի բարեխոսությունը, և թող Նոր, Որդու և Սուրբ Հոգու՝ անբաժանելի Սուրբ Երրորդության շնորհը, սերը և աստվածային սրբարար գործությունը լինի բոլորիս հետ, ամեն: